<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ>> ՀԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայում

Սեմինարավար՝ Վերոնիկա Բաբաջանյան

Կատարող՝ Նունե Փաշինյան (թիվ 10 հիմնական դպրոց՝ դասվար)

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Դպրոցի դերը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման գործում----------5

Պատասխանատու և արժեհամակարգային կրթությանն ուղղված մեթոդներ----------8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երեխայի անհատականության ձևավորման վրա ազդում են բազմաթիվ սոցիալական պայմաններ և կենսաբանական գործոններ, սակայն այս գործընթացում որոշիչ դեր են խաղում կրթականը և մանկավարժականը, որոնք ուղղված են որոշակի տեսակի հարաբերությունների զարգացմանը: Աշակերտների բարոյականության ձևավորումը դպրոցի կարևորագույն խնդիրն է:

Երեխայի անձի և վարքագծի ձևավորման գործընթացում բացառիկ նշանակություն ունի նրա արժեքային դաշտը: «Բարոյականություն» հասկացությունը ներկայացնում է մարդուն առաջնորդող ներքին, հոգևոր որակները՝ էթիկական նորմերը, վարքագծի կանոնները, որոնք պայմանավորվում են այն արժեքներով որ նա կրում է:

Արժեհամակարգային կրթությունը անձի մոտ այն գծերի ձևավորումն է, որոնք որոշում են մարդու առօրյա վարքագիծը, նրա վերաբերմունքը շրջապատի և այլ մարդկանց նկատմամբ՝ հիմնված յուրաքանչյուր մարդու նկատմամբ հարգանքի և բարի կամքի վրա:

«Բարոյական դաստիարակություն» հասկացությունը բավականին լայն է. Կրթության առանցքը անհատի բարոյական զգացմունքների զարգացումն է: Եթե այդ զգացմունքները դաստիարակվում են, ապա մարդը, ասես, կամայականորեն ճիշտ է կողմնորոշվում, շրջապատի և իր կյանքի նկատմամբ դրսևորելով պատասխանատու վարք: Կրում է պատասխանատվություն առ հայրենիքի, ընտանիք, աշխատանք, այլ մարդիկ, բնություն, սեփական անձ և առողջություն: Ասվածն ավելի քան փաստում է հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները. Աշխատանքի ***նպատակն է*** ուսումնասիրել անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանը նպաստող մեթոդները և դրանց կիրառման առանձնահատկությունները <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասավանդման մեջ:

Աշխատանքի խնդիրներն են.

- ✓ Ներկայացնել դպրոցի դերը կրտսեր դպրոցականի անձի ու պատասխանատու վարքի ձևավորման գործում:

- ✓ ՈՒսումնասիրել մեթոդական այն հնարքները, որոնք կնպաստեն դասապրոցեսի ընթացքում դպրոցականի մոտ անձնային որակների ու պատասխանատու վարքի ձևավորմանը:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու բաժիններից ու եզրակացություններից: Ներածությունը հիմնավորում է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, առաջին բաժնում փորձ ենք կատարել ներկայացնելու դպրոցի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգային կրթության գործում, իսկ երկրորդ բաժնում ներկայացրել ենք այն մեթոդները, որ կարծում ենք առավել վերջնարդյունքահեն են և կնպաստեն պատասխանատու անհատի ձևավորմանը: Այս հատվածում նաև ներկայացրել ենք դասի պլան, որը հնարավորություն կտա <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի շրջանակներում ձևավորել պատասխանատու և գիտակից վերաբերմունք շրջապատի նկատմամբ:

1. Դպրոցի դերը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման գործում

Ժամանակակից ուսումնական հաստատությունում դաստիրակչական աշխատանքն այլևս չի կարող դիտարկվել որպես բուն կրթական պրոցեսին լրացուցիչ աշխատանք: Այն ամբողջական կրթական գործընթացի անբաժանելի մասն է և ներառում է իր գործընթացի մեջ գտնվող բոլոր օբյեկտների և սուբյեկտների միջև փոխհարաբերությունների և փոխազդեցությունների բոլոր ձևերը: Կրթությունն իր բնույթով արժեքավոր է: Մենք՝ երեխաների հետ աշխատող մեծերս անընդհատ որոշակի արժեքներ ենք փոխանցում նրանց: Ավելին, նրանց հետ մեր շփման կոնկրետ բովանդակությունը (օրինակ՝ առարկայական, իրավիճակային) անցողիկ է, մինչդեռ արժեքները, որ փոխանցում ենք նրանց այդ ընթացքում, մնում և ամրագրվում են մեր աշակերտների ներսում և գործում հոգևոր ուղեցույցների տեսքով:

«Արժեքի դաշտը» արժեքների և իմաստների ամբողջություն է, որը ընկած է դպրոցական կյանքի ամբողջ համակարգի հիմքում: Արժեքային դաշտը (կարելի է ասել՝ «դպրոցի կրթական միջավայրի արժեքային համատեքստը») ձևավորվում է մի քանի աղբյուրներից.

1. Ուսումնական գործունեության կանխատեսվող արժեքային համատեքստ, մեծահասակների մասնակցությամբ (արժեքներ, որոնք ներկայացվել են գիտակցաբար, որոշ հայեցակարգային գաղափարների հիման վրա),
2. Ուսումնառողների անձնական արժեքները,
3. Կրթական գործընթացում ուսումնառողների փոխադեցությունների արդյունքում ձեռք բերված արժեքներ:

Սկզբունքորեն, կրթության արժեքաստեղծ դերի մասին տեսությունը մշակվել է Բ.Տ. Լիխաչովի կողմից, ով վերլուծել է «արժեք» կատեգորիայի էությունն ու հիմնական բովանդակությունը և բացահայտել կրթական համակարգի արժեքների աղբյուրները: Լիխաչովի համար արժեքները կազմում են անձի հիմնական հոգևոր բաղադրիչը, որը որոշում է նրա ներաշխարհի էությունը:

Ընդհանրապես, շատ ժամանակակից մանկավարժներ և կրթության փիլիսոփաներ գնահատում և հաստատում են արժեքները որպես մանկավարժական

տեսության և պրակտիկայի կենտրոն: Դիտարկվում են կրթության բովանդակության արժեքային ընդլայնման հետևյալ ասպեկտները[1].

ա/ Ինքնաճանաչողությունը՝ որպես կրթության կարևորագույն բաղադրիչ: Մարդը, ով ճանաչում է իրեն, մարդասեր է (Մասլոու): «Դպրոցը պետք է օգնի երեխային նայել իր ներսը և որոշել արժեքների շարք, որոնք համահունչ են սեփական յուրահատուկ մարդկային էությանը»: Մարդը, ով ճանաչում է իրեն, կարող է ապրել մարդու պես փոփոխվող աշխարհում: Կարևորագույն հարցն այն է, թե ինչպե՞ս պետք է հասնել աշակերտի ինքնաճանաչողությանը: Առաջարկվող տարբերակներ.

- սեփական անձի հարաբերակցությունը, սեփական զարգացման ընթացքը պարբերաբար համեմատելով մարդկության պատմության մեջ տեղի ունեցածի հետ, կոնկրետ մարդկանց, գրական հերոսների ճակատագրին և այլն.
- տեղեկատվության կենդանացում. ցանկացած նոր տեղեկություն մարդուն կանգնեցնում է բարոյական խնդրի առաջ՝ ապրել և գործել ձեռք բերած գիտելիքներին համապատասխան կամ դրան հակառակ: Հետևելով տեղեկատվության յուրացմանը՝ անհրաժեշտ է կառուցել այնպիսի կրթական իրավիճակներ, որոնք թույլ կտան ձևավորել և դրսևորել սովորողի գիտակցված բարոյական վարք:
- կրթությունը պետք է օգնի երեխային գտնել հետևյալ հարցերի պատասխանները. ո՞վ եմ ես, ինչպե՞ս եմ ապրում, ինչո՞ւ եմ դա անում, ի՞նչ եմ ուզում կյանքից, այլ մարդկանցից, ի՞նչ եմ ուզում ստանալ հաջորդիվ, ի՞նչ ուսումնասիրել:

բ/ Ճիշտ ընտրված ուսուցումը՝ որպես կրթության բովանդակության կարևոր կողմ: Կրթության արժեքային ասպեկտը ուղղված է կյանքի խնդիրները բարոյական ճանապարհով լուծելու, մարդու գիտակցված ընտրություն կատարելու կարողության զարգացմանը: Կրթության նպատակը սեփական կյանքի նկատմամբ ռեֆլեկտիվ, ստեղծագործական, բարոյական վերաբերմունքի ձևավորումն է:

գ/Կեղծ խնդիրների մերժումը, կրթության կենտրոնացումը մարդու և մարդկության իսկապես լուրջ խնդիրների վրա:

դ/Կյանքի գեղեցիկ և զարմանալի կողմերի գիտակցումը՝ որպես կրթության բովանդակություն և ընդհանուր մանկավարժական վերաբերմունք:

[1] Артюхова И. С., Ценности и воспитание // Педагогика, 1999, №4, с. 78-80.

ե/Մարդու ամենակարևոր կարիքների բավարարումը որպես կրթության բովանդակություն՝ ճանաչման, ինքնահարգանքի, հաջողության, անվտանգության, հաղորդակցության, սիրո և փոխըմբռնման մեջ:

Կրտսեր դպրոցական տարիքում բուռն կերպով հարստանում է երեխայի բառապաշարը, զարգանում է կապակցված խոսքը: Դպրոցի դերն է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուտ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/, դասաժամերին ստեղծելով արտահայտվելու, հաղորդակցվելու հնարավորություններ, առաջացնելով արտահայտվելու, գեղեցիկ խոսելու պահանջմունքներ: Այս տարիքում ձևավորվում է նաև գրավոր խոսքը, որը երեխայի համար բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է, որի ընթացքում զարգանում է ոչ միայն նրա գրագետ խոսք կառուցելու բազմաբաղադրիչ կարողությունը, այլև անձնային բազմաթիվ որակներ, որոնք չափազանց կարևոր են հետագա ուսումնական գործունեության ընթացքում: Կրտսեր դպրոցական տարիքում արմատանում են վարքի բարոյական հիմքերը, ձևավորվում են բարոյական նոր չափանիշներ, համոզմունքներ, յուրացվում են վարքի տարաբնույթ կանոնները, եթե սկզբում աշակերտները կատարում են դրական բարոյական արաքներ՝ հետևելով մեծերի, մասնավորապես՝ ուսուցչի ուղղակի ցուցումներին, ապա հետո այդ արարքներն իրականացնում են սեփական նախաձեռնությամբ՝ իրենց արարքները գնահատելով հասարակական նշանակության դիրքից[2]: Այս փուլում նրանց հատուկ է պարտքի, պատասխանատվության և ինքնաանդրադարձ /ռեֆլեքսիա/ կատարելու ընդունակությունը: Կրտսեր դպրոցական տարիքում կազմավորվում է աշակերտի բնավորությունը, որն աչքի է ընկնում ինքնատիպ առանձնահատկություններով: Առաջին հերթին հարկ է նշել նրանց իմպուլսիվությունը՝ անմիջական ազդակների ազդեցության տակ անհապաղ գործելու հակումը: Կրտսեր դպրոցականի ուսումնական դրդապատճառները դեռևս ամբողջովին գիտակցված չեն, իսկ կամքով պայմանավորված գործողությունները՝ թերի, անբավար՝ չնայած այն բանին, որ այդ տարիքում երեխաներն ունենում են որոշակի հաստատակամություն և կարող են իրենց առջև դնել ավելի հեռավոր նպատակներ: Փորձելով հասնել դրանց՝ նրանք հաճախ ստանձնած գործը չեն հասցնում ավարտին, հետամուտ չեն լինում բոլոր դժվարությունները հաղթահարելու

2 Միջազգային ծրագրերի շրջանակ, տարրական կրթություն, the-learner-en_d32875a1-8611-4de3-9f7d-14a22127adc2.pdf, հասանելի է:

խնդրում, իսկ անհաջողության դեպքում կարող են կորցնել հավատը սեփական ուժերի նկատմամբ: Կրտսեր դպրոցականի բնավորության տարիքային առանձնահատկություններից են նաև զգայունությունը, բարձր խոցելիությունը, հուզականությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, դյուրահավատությունը, ընդօրինակումը[3]: Նրանք ընդօրինակում են ծնողներին, մեծերին, դիտած կինոնկարների հերոսներին: Այս հատկանիշը, անշուշտ, հնարավորություն է տալիս անձնական օրինակով երեխայի մեջ դաստիարակել արժեքավոր գծեր, սակայն չպետք է մոռանալ, որ կրտսեր դպրոցականը կարող է ընդօրինակել և ոչ միայն լավը, այլև՝ բացասականը: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ուսուցիչը և երեխայի հետ շփվող յուրաքանչյուր չափահաս իր վարքով ու խոսքով, համոզմունքներով և սովորություններով միայն դրական օրինակ պիտի ծառայի:

2. Պատասխանատու և արժեհամակարգային կրթությանը նպատակաուղղված մեթոդներ

Դպրոցի դաստիարակչական գործունեության գլխավոր խնդիրներից է աշակերտների և նրանց շրջապատող մարդկանց (ընկերներ, ծնողներ, ուսուցիչներ, բարեկամներ և այլք), շրջակա միջավայրի (բուսական և կենդանական աշխարհ), ինչպես նաև հոգևոր արժեքների միջև շփման մշակույթի ձևավորումը, որն էլ կազմում է ապագա անհատի աշխարհայացքը, վերջինիս արժեահամակարգային վեկտորը: Վերոհիշյալ խնդիրների լուծման միջոցներն են ծնողական ժողովները, հանդիպումները, իրադրային և շարժական խաղերը, թատերականացված բեմականացումները, զրույցները, քննարկումները, մրցույթները, օլիմպիադաները, կրտսեր դպրոցականների աշխատանքների ցուցահանդեսները, էքսկուրսիաները և այլն:

Կրթությունն այսօր նախևառաջ աշխատանք է մարդկային հարաբերությունների իմաստների, արժեքների, համակարգի, նրա հուզական-կամային և ռեֆլեքսային ոլորտների հետ, այն ամենի հետ, ինչը թույլ է տալիս մարդուն գիտակցել, գնահատել և կատարելագործվել՝ միաժամանակ խիղճը դարձնելով սեփական գործողությունների ու արարքների հիմնական չափանիշը:

3 Միջազգային ծրագրերի շրջանակ, տարրական կրթություն, the-learner-en_d32875a1-8611-4de3-9f7d-14a22127adc2.pdf, 19.01.2022/00:38.

Այժմ ներկայացնենք կրթական մի քանի ժամանակակից մեթոդներ, որ կարծում ենք լավագույնս հնարավորություն կտա դասապրոցեսի ընթացքում ակադեմիական գիտելիքից զատ, նաև արժեհամակարգային կրթության իրականացման:

Միջառարկայական կրթություն

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 12 տարեկան երեխան դեռևս ֆիզիկապես և հոգեպես բավարար չափով պատրաստ չէ երևույթներն անջատ-անջատ ընկալելու: 11-12 տարեկանը դեռ չի «առանձնացել» իր Ես-ի հետ, իրեն դեռ բավականին չի ճանաչում[4]: Ուստի կրթական պրոցեսը մաքսիմալ արդյունավետ դարձնելու համար նպատակահարմար է ուսուցումն իրականացնել երեխայի հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակներից բխող ուսումնական բնագրի վրա տարվող աշխատանքներով:

Միջառարկայական ինտեգրումը որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Միջառարկայական նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով[5]:

Վերջին տարիներին որպես նորարարական մեթոդ անընդհատ շրջանառվում է ***<<դասարանի շրջումը>>:*** Թեման հատկապես հետաքրքրական է նրանով, որ մեթոդի կիրառումը հայտնի է հիմնականում հումանիտար գիտությունների ասպարեզում ու միջին և բարձր դասարանների շրջանակներում:

<<Շրջված դասարան>> մեթոդի էությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն ավանդական դասավանդման, որտեղ ուսուցիչը պարտադիր դասարանում երեխաներին ծանոթացնում է նոր դասին, այստեղ նոր դասին ծանոթացումը տեղի է ունենում դասարանից դուրս: Այս մեթոդի հիմնավորումը կարելի է գտնել Բլումի հայտնի տաքսոնոմիայից, որը հայտնի է Բլումի բուրգ անունով, և ներկայացնում է իմացականի աստիճանները բուրգի տեսքով.

---

[4] Մկրտչյան Գ., Միասնացված կրթության անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Նախաշավիղ 7-8, Ե., 2009, էջ 48:

[5] Полат Е. С., Бухаркина М. Ю., Моисеева М. В., Петров А. Е., Новые педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие / под ред. Е. С. Полат, М.: «Академия», 1999, с. 36.

Այս տաքսոնոմիան ստեղծվել է Բենջամին Բլումի կողմից 1956թ-ին՝ որպես ուսումնառական վերջանդյունքների և նպատակների դասակարգման ձև: Մտավոր ունակությունների սկզբնական դասավորվածությունը հետևյալն էր՝ գիտելիք, վերարտադրում, կիրառություն, անալիզ, սինթեզ և գնահատում: Այնուհետև այս շրջանակը վերանայվեց և 2001թ-ին վերահրապարակվեց փոփոխված տարբերակը՝ հեղինակներ Լորին Անդերսոնի և Դավիթ Կրաթվոլի կողմից [6]:

Հղում անելով Բլումի տաքսոնոմիային <<Շրջված դասավանդում>> մեթոդի կողմնակիցները նշում են, որ իմացականի առաջին երկու աստիճաններին երեխան կարող է հասնել նաև ինքնուրույն՝ դիտելով կարճ տեսադաս կամ ինֆորմացիոն տեքստ: Նոր դասանյութին ծանոթ աշակերտների հետ աշխատանքը ուսուցիչներին հնարավորություն է տալիս զարգացնել թեմայի տիրապետման աստիճանը և, գիտելիքը խորացնելով, բուրգի աստիճաններով վեր բարձրանալ:

Կարծում ենք մեթոդի ամենամեծ առավելությունն այն է, որ երեխան, որը քիչ թե շատ պատկերացում ունի նոր դասանյութի մասին, ավելի ոգևորված ու հետաքրքրված կլինի դասով: Բացի այդ մեթոդը, ինչպես նշեցինք, թույլ է տալիս դասի ընթացքում ուշադրության առավել մեծ չափաբաժինը սևեռել ձեռք բերված գիտելիքն ու

[6] Միջազգային կրթության բյուրո, http://www.ibe.unesco.org/en/glossary-curriculum-terminology/t/transdisciplinary-approach

հմտությունը կիրառելու, այն խորությամբ վերլուծելու, գնահատելու և ինքնուրույն կամ խմբով ստեղծագործելու վրա: Այսինքն զուտ կարդալ պատմելու հասարակ քայլերը, որոնց երեխան կարող է նաև ինքնուրույն հասնել, արվում է տանը, որտեղ ուսուցիչը չի կարող ուղղորդել: Իմացականի առավել բարձր աստիճանի երեխաները հասնում են դասարանում՝ուսուցչի անմիջական մասնակցությամբ ու ուղղորդմամբ: Մեթոդը մեր թեմայի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրական է այնքանով, որ հնարավորություն է տալիս աշակերտների շրջանում զարգացնել ստեղծագործական, հաղորդակցական, վերլուծական, քննադատական կարողություններ: Կարծում ենք ճիշտ ուղղորդման դեպքում մեթոդը կարող է նպաստել հայրենասիրական, կարեկցական, հուզական, խաղաղասիրական, դիմացինին իր բոլոր առավելություններով ու թերություններով ճանաչելու և սիրելու կարևոր արժեքների սերմանմանը:

Նշված և այլ համագործակցային տեխնոլոգիայի կիրառման ժամանակ յուրաքանչյուր սովորող աշխատում է իրեն հատուկ անհատական տեմպով. Նա պատասխանատու է ոչ միայն իր, այլև ողջ կոլեկտիվի աշխատանքի և հաջողության համար, ձևավորվում է համարժեք գնահատական անձի սեփական հնարավորությունների, կարողությունների և թերությունների վերաբերյալ: Ուսուցիչն այլևս կարիք չունի դանդաղեցնելու կամ արագացնելու այս կամ այն սովորողի առաջադիմության տեմպը, այս հանգամանքը դրականորեն է ազդում դասարանական կոլեկտիվի մթնոլորտի վրա:

Դասի պլան
Ուսուցիչ՝ Փաշինյան Նունե Դպրոց՝ 10 Դասարան՝ 4 Աշակերտների քանակ՝ 28 Ամսաթիվ՝

Դասի թեման և հարցերը Դասի թեման՝ <<Ինչպես փրկել երկրագնդի բնությունը >> Հիմնական քննարկումը տարվելու է հետևյալ հարցերի շուրջ. • Ինչպես է մարդն ազդել բնության վրա դարերի ընթացքում, • Ինչու հատկապես հիմա բնությունը չի կարողանում ինքնավերականգնվել և ունի մեր օգնության կարիքը, • Ինչպես և ինչու պետք է ձեռք մեկնենք բությանը, • Ինչ է նշանակում լինել պատասխանատու բնության նկատմամբ: Դասի հիմնական հարցերը. 1. Ինչ է բնությունը, ինչպես է մարդն այն օգտագործում, 2. Ինչպե՞ս է մարդու գործունեությունը փոխել բնական միջավայրը, 3. Ի՞նչ խնդիրներ է առաջացել մթնոլորտի կրճատման ու անտառների աղտոտման հետևանքով, 4. Շրջակա միջավայրի վերականգնան ի՞նչ միջոցառումներ պետք է ձեռնարկել:	
Դասի վերջնարդյունքները. • Կարողանալ սահմանել ինչ է բնությունը, • Կարողանալ ներկայացնել բնության դերը մարդու կյանքում, • Իմանալ բնօգտագործման փուլերը • Գիտակցել մարդու դերը բնական էկոհամակարգերի վերականգնման գործում:	
Ռեսուրսներ • Մուլտֆիլմ, • Ինքնուրույն կատարած հետազոտության նշումներ, նկարներ	
Դասի ընթացքը	**Աշակերտների գործողությունները**
Դասի սկիզբը՝ 5ր	Մտագրոհի փուլում երեխաները մեկ նախադասությամբ նշում են ինչ խնդիրներ են հետազոտել, ինչ վիճակում է մոլորակը, մայր բնությունը
10 րոպե 1 Փուլ.	Գրատախտակի վրա ժամանակի ճառագայթ ենք գծում՝ և երևակայությամբ փորձում բացահայտել ինչպես է մարդն օգտագործել բնությունը ամեն մի փուլում
15 ր 3-րդ փուլ	Արդեն ձևավորված 3-4հոգանոց խմբերով խմբերով փորձել բնության փրկության ճանապարհին քարտեզ մշակել:
10ր	Ամփոփում, հետադարձ կապ. Որն էր դասից ստացած ամենարժեքավոր ինֆորմացիան, ինչպես կարող ենք ավելի պատասխանատու լինել մեզ շրջապատող միջավայրի նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դպրոց-ընտանիք-մասնագիտական կրթություն. Սրանք այն եռամիասնությունն են, որ կերտում են մարդու արժեհամակարգը, նրան դարձնում այս կամ այն արժեքի կրողը: Ժամանակակից դպրոցի և ընտանիքների առջև շատ ավելի բարդ խնդիր է դրված, քան նախկինում էր: Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման պայմաններում նոր սերունդը չունի տեղեկատվության պակաս, բայց միանշանակ է այդ տեղեկատվությունը արժևորելու բացը: Ուստի դպրոցը՝ որպես ընտանիքին հավասար սոցիալակն ինստիտուտ պետք է կարողանա ակադեմիական գիտելիքից զատ աշակերտի մեջ սերմանել նաև պատկերացում և սեր ճշմարիտ արժեքների նկատմամբ:
2. Այնպիսի արժեքներն, ինչպիսիք են ընտանիքը, սերը դեպի հայրենիքը, ապագա սերունդները, հավերժական են և մարդկային գոյության հիմքն են կազմում: Մյուս կողմից ժամանակակից մարդուն իր գոյության ողջ ընթացքում անհրաժեշտ է որոշակի փիլիսոփայական ու հոգեբանական հենք, որ կարողանա դիմագրավել ու հարմարվել ճգնաժամային իրավիճակներին: Սա միանշանակ պետք է իրականացվի կրթության միջոցով և այստեղ անսասան է դպրոցի ու ուսուցչի դերը:
3. Հասարակական համակարգերի նորացման, գիտատեխնիկական, տեղեկատվական միջոցների որակական թռիչքի արդի փուլում առավել քան երբևէ նորացման կարիք ունեն կրթական համակարգերը: Խոսքը հատկապես վերաբերում է անցումային տնտեսությամբ երկրներին, ինչպիսին է նաև մեր երկիրը:
4. Ժամանակակից դպրոցի և մանկավարժի խնդիրն է այնպիսի արժեհամակարգ ունեցող սերնդի կրթումը, որը կկարողանա գնահատել իրեն մատուցվող ճշմարտությունը և ինքնուրույն կարողանա ընտրել: Ուստի կարծում ենք, որ դպրոցը պետք կրթի հանդուրժող, ինքնուրույն մտածող վերլուծող ու ողջ կյանքում ինքնակրթման եռանդով լի աշակերտներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Մկրտչյան Գ., Միասնացված կրթության անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Նախաշավիղ 7-8, Ե., 2009,

2.Միջազգային ծրագրերի շրջանակ, տարրական կրթություն, the-learner-en_d32875a1-8611-4de3-9f7d-14a22127adc2.pdf, հասանելի է:

3.Միջազգային կրթության բյուրո, http://www.ibe.unesco.org/en/glossary-curriculum-terminology/t/transdisciplinary-approach

4.Артюхова И. С., Ценности и воспитание // Педагогика, 1999, №4, с. 78-80.

5. Полат Е. С., Бухаркина М. Ю., Моисеева М. В., Петров А. Е., Новые педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие / под ред. Е. С. Полат, М.: «Академия», 1999.